ասա՛ թէ պատրաստ լինիցի զի ի գալ ամ-
սոյն մեծ պաշտօն ինչ տալոց եմ նմա,
և եթէ մին պակասութիւն ինչ ունիցի՝
ասասցէ քեզ։ Եւ նա ասէ. Գիտեմ զի ի
Մսովա 20 վաքիէ փոխ էառ։ Եւ թա-
գուհին ընդ լսելն զայս՝ իսկոյն հանեալ
ետ զ20 վաքիէ ոսկի՝ որ առնէ 500 զրշ.
և ասա՛ նմա զի ուրախ լինիցի։ Եւ ելեալ
Այդոյ Բիջոն գնաց առ Թովմաճանն և
ասէ։ Զի՞ է քեզ զի գանգատեալ ես վե-
րակացու իշխանին։ Իսկ նա տրտում և
տխուր դիմօք ասէ. վասն քո աղօթեմ։ Եւ
նա ասէ. Գիտեմ զի այդ աղօթիւդ անի-
ծաբանես զիս, և թագուհին լուեալ է
զտրտմութիւն քո. կոչեաց զիս և յան-
դիմանեաց թէ ընդէ՞ր ոչ գնաս առ նա և
մխիթարես. և թէ մին պակասութիւն ինչ
ունի՝ ասասցէ քեզ. և ես ասացի թէ
պարտս ունի 20 վաքիէ ի Մսովա, վասն
այն փոքր ինչ տրտում է ասացի։ Եւ
իսկոյն ետ ինձ ահա զ20 վաքիէ. և առ
այժմ ա՛ռ զայս և ի գալ ամսոյն պաշ-
տօն եւս տալոց եմ ասաց. և կամի զի
դու ուրախ լինիցիս հանապազ։

Յայնժամ փոքր ինչ մխիթարեալ Թով-
մաճանն՝ ասէ ցնա. Սիրելի՛, ես վաճա-
ռական եմ և կամիմ վաճառել զապրանս
և դառնալ ի տուն իմ, քանզի որդւոց և
ընտանեաց տէր եմ, և ասա պաշտօն առ-
նուլ և նստել ասա՛ ինձ ո՛չ վայելէ։ Ասէ
Այդոյ Բիջոն. Ահա այժմ իմացար թէ ասա
ոչ վաճառին ինչքդ, և զայսքան ծախ
արարեր մինչեւ ի գալդ և զայսքան ըն-
ծայս եւս ետուր։ Այժմ եւս զայնքան ծախ
պարտիս առնել ի գնալդ. ուրեմն քանի
մի տարի նի՛ստ ասա ի պաշտօնիդ գոնեա
զարարեալ ծախսդ հանցես։ Եւ երբէք ոչ
ումեք ասասցես թէ կամիս գնալ. զի յի-
բաւի և ես ցաւիմ ի վերայ քոյ որ պատ-
ճառ եղէ զալստեանդ, վասն որոյ խնդրեմ
զի համբերեացես և ուրախ ցուցցես զքեզ
առ ի հաճոյանալոյ թագուհւոյն և իշ-
խանացն։

Եւ ինքն եւս Թովմաճանն խորհեցաւ
ընդ որդւոյ իւրում թէ իրաւ ասէ Այդոյ
Բիջոն թէ յետ այսքան ծախոյ պարապ
և ընդվայր դառնալն զինչ օգտիցեմք.
ո՛չ ինչ. ուրեմն կացցուք ասա և տեսցուք
զի՞նչ պաշտօն տացեն մեզ։ Եւ սկսաւ այ-
նուհետեւ ուրախութեամբ ելեւմուտս առ-
նել ընդ մեծամեծաց և բարեկամութիւնս
առնել, և յամենայն աւուր ռոճիկն զայր
ի թագաւորէն և յոյժ սիրելի եղեւ ամե-
նեցուն և մանաւանդ ընդ Ճզմաթի Շէ-
թէին զի բազում անգամ կոչէր զԹով-
մաճանն ի սեղան իւր՝ որոյ 150 զուրուշի
ընծայ տուեալ էր և եւս թէ ընդ թա-
գուհւոյն մեծ սիրով և ազգական էր։
Վասն այն և Թովմաճանն յաճախակի
գնայր առ նա։ Եւ յաւուր միում այս
Ճզմաթի Շէթէն այսինքն Բաշայ Շէթիէն
ծիծաղելով ետ զաւետիսն պաշտօնին ի
ծածուկ գանձապետութեան թագաւորի։
Այլ եւս ազդ արար թէ ի գալ շաբաթու
հաշիւ գանձին առնելոց են, զքեզ եւս կո-
չեսցեն անդ, և դու եւս պատրաստ լեր։

Վասն որոյ զայս լուեալ Թովմաճանին՝
կարծելով թէ մեծ ինչ իցէ կամ մեծ վաս-
տակ լինելոց ի գանձապետութենէն, վասն
այն մեծ ուրախութեամբ դարձաւ ի խուց
իւր։ Եւ ի նմին ժամանակի էր գանձա-
պետ ի հայոց ազգէն Առապկերցի ծեր
ոմն բիրտ և տխմար, որ ի վաղուց եկեալ
էր, որոյ անունն էր Սելէֆ ուստայ։ Եւ
յետ աւուրց ոմանց կոչեցին զՍելէֆ ուս-
տան ի յարքունուստ և խնդրեցին ի նմա-
նէ տալ զհամար գանձին. և ժամադիր
եղեն՝ թէ յայն ինչ օր արասցուք։ Եւ
եկն ժամադրեալ օրն և կոչեցին անդ զԹով-
մաճանն և զորդի նորա զՊօղոսն. այլեւս
վեց անձինք զրագիրք համարոյ։ Եւ ա-
ռաջի իւրաքանչիւրոցն սփռեալ կային մի
մի կովու կաշի և բակլայ՝ որով առնելոց
են զհաշիւն. և առաջի Թովմաճանի և
որդւոյն եւս բերեալ սփռեցին զայն կա-
շին բակլայով։ Յանժամ ասէ Թովմաճանն
ծիծաղելով թէ՝ Թողութիւն շնորհէք, մեք
այսու զոեհկական և տաժանելի կերպիւ
հաշիւ ոչ գիտեմք ասելով՝ եհան ի միջոցն
զարծաթեայ կաղամարն և զթուղթն, և
սկսաւ թուագրով այսինքն բախամով ըստ
սովորութեանց իւրեանց գրել ընդ որդւոյն։